ՍԱՍՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՑԱՐԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԵԿԱՏԵՐԻՆԱ II-Ի ՕՐՈՔ

Հայ-ռուսական հարաբերությունների հիմքը դրվել է դեռևս Ժ.-ԺԲ. դդ.: Այդ ժամանակաշրջանում հայ վաճառականներն առևտրով են զբաղվել մերձվոլգյան և մերձդնեպրյան քաղաքներում: Ավելի ուշ Ռուսաստանի հարավային փարածքներում ստեղծվեցին հայկական գաղթօջախներ: Դրանցից առավել հայտնի էին Մոզդոկում, Աստրախանում, Կզլարում հիմնված հայկական գաղութները:

ԺԷ. դարում Ռուսաստանը արդեն կայացած և հզոր պետություն էր և մեծ հետաքրքրություն էր փածում արևելյան երկրների նկատմամբ: Այդ հետաքրքրությունից անմասն չէր նաև Հայաստանը: Փաստորեն, իրական շարժառիթ էր ստեղծվում, որպեսզի ռուսական կայսրության օժանդակությամբ ազատագրվեր Հայաստանը օտարների լծից:

Առաջին լուրջ քայլը Ռուսաստանի հետ հարաբերություններ ստեղծելու ուղղությամբ արվեց ԺԷ. դարի յոթանասունական թվականներին: Գանձասարի Պետրոս Կաթողիկոսը (1653-1675 թթ.) հատուկ ուղերձով դիմում է Ալեքսեյ Միխայիլովիչ (1645-1676 թթ.) ցարին և խնդրում, որ նա ռուսական կայսրության հովանավորության տակ առնի հայ ազգին և օգնություն ցուցաբերի, որպեսզի Հայաստանը թոթափի օտարի լուծը:

ԺԸ. դարի երկրորդ կեսին ռուսական կայսրության նվաճողական նկրտումները կարծես համընկնում էին հայ ազգային ազատագրական շարժման միտումներին ու ընթացքին: Այս ժամանակաշրջանը նույնպես ծանր էր հայ ժողովրդի համար: Ազգի միակ հավաքական ներկայացուցիչը Եկեղեցին էր, որը հաճախակի էր հալածանքների ենթարկվում օտար զավթիչների կողմից:

1760 թ. Հայոց Կաթողիկոս Հակոբ Շամախեցին (1759-1763 թթ.) կոնդակ է հղում ցարական արքունիք, խնդրելով, որ Ռուսաստանը օգնություն ցուցաբերի հայերին ու վրացիներին «հանուն քրիստոնեության»[1]: Հայրապետի ուղերձը իր հետ Պետերբուրգ է փանում վրաց արքա Թեյմուրազ II-ը (1732-1762 թթ.):

Գործողությունների նման ընթացքը ցույց է փալիս, որ ստեղծված իրավիճակը ստիպում էր հայերին ու վրացիներին գործել համատեղ. «վրացիների հետ այս գործում միաբան էին և հայերը» [2]:

Չնայած Կաթողիկոսի հորդորներին՝ նրա նամակը անպատասխան մնաց: Այնուամենայնիվ Հայկական հարցի ծանր ընթացքն իր վրա է վերցնում Հայ Եկեղեցին: Եւ

1 Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2, Երևան, 1973, էջ 276:
2 Անդ, էջ 276:

հենց դա էր պատճառը, որ այս փուլից սկսած՝ կարծես հայ ազատագրական շարժումը, ինչպես Լեոն էր ասում, մտցվեց «Էջմիածնական շրջանի»[3] մեջ:

Ռուսաստանի հետ Էջմիածնի հարաբերություններն ավելի լավ դասավորվեցին Սիմեոն Ա. Երևանցու (1763-1780 թթ.) կաթողիկոսության տարիների դեռ սկզբին: Նրա բազմաժավալ գործունեության մեջ ամենանշանավորը կարելի է համարել Ռուսաստանի հետ ունեցած նրա հարաբերությունները: Նա շարունակեց իր նախորդի՝ Հակոբ Շամախեցու սկսած գործը, որի նպատակն էր՝ բարիդրացիական հարաբերություններ հաստատել ռուսական արքունիքի հետ եւ այդ հզոր պետության օգնությամբ ազատագրել հայ ժողովրդին պարսկական եւ թուրքական ահասարսուռ լծից: Իսկ այդ ժամանակահատվածում քաղաքական հանգամանքները կարծես ընթանում էին հօգուտ հայերի: Կայսրուհի Եկատերինա II-ը (1762-1796 թթ.), պատրաստվում էր պատերազմ սկսել Թուրքիայի դեմ: Կայսրուհին կոչ արեց Անդրկովկասում եւ Բալկաններում ապրող քրիստոնյաներին ապստամբության ալիք բարձրացնել ընդդեմ Թուրքիայի: Եկատերինան խոստանում էր ազատագրել քրիստոնյաներին մահմեդական դաժան լծից: Պայքարին ավելի ուղղորդված ընթացք տալու համար՝ Սիմեոն Երեւանցին ջանք չէր խնայում, որպեսզի Միածնաէջ տաճարը դառնար հայ ազատագրական շարժման կենտրոնը: Նրա նման հայրենասեր անհատը ծանր էր տանում այն հանգամանքը, որ իր հայրենիքը եւ ժողովուրդը տառապում են օտար զավթիչների իշխանության ներքո: Ստեղծված իրավիճակից դուրս գալու համար Ամենայն Հայոց Հայրապետը միջոցներ էր որոնում: Սիմեոն Երեւանցին հայրենիքի ազատագրման միակ իրական ճանապարհը տեսնում էր Ռուսաստանի մեջ: Կաթողիկոսը կողմ էր այլ պետությունների միջոցով ազատագրել սեփական հայրենիքը, բայց նա կտրականապես դեմ էր ներքին ազատագրական պայքարին: Պատճառն այն էր, որ լինելով հեռատես կրոնական եւ քաղաքական գործիչ՝ քաջ գիտակցում էր, որ ցանկացած ներքին ընդվզման դեպքում այն դաժանորեն կճնշվեր Պարսկաստանի եւ Թուրքիայի կողմից, իսկ դա արդեն կարող էր աղետալի ընթացք ունենալ հետագայի համար, անգամ Ռուսաստանի պես հզոր դաշնակցի օգնության դեպքում: Այդ պատճառով ազգային Եկեղեցու միասնությունն ամրապնդելու համար, Վեհափառը ամեն կերպ փորձում էր բարձրացնել Էջմիածնի դերը եւ ուժեղացնել նրա քաղաքական ու տնտեսական նշանակությունը:

ԺԸ. դարի երկրորդ կեսին ռուսական կայսրությունում հայկական գաղթօջախների հոգեւոր կյանքը գտնվում էր ոչ բարվոք վիճակում: Մայր Աթոռը կարծես կորցրել էր իրավասությունը Ռուսաստանի հայկական թեմերի հանդեպ: Այդ թեմերն իրենց բողոքի ալիքն էին բարձրացրել Մայր Աթոռի նկատմամբ դեռեւս Ղազար Ջահկեցի (1737-1751 թթ.) Կաթողիկոսի գահակալության տարիներին:

1749 թ. ռուսաստանաբնակ հայերն իրենց հոգեւոր առաջնորդ են ընտրում Գանձասարի աթոռին ենթակա մի եպիսկոպոսի՝ Ստեփանոս անունով: Այսպիսով, Էջմիածինը կարծես կորցրեց իր արտոնությունները ռուսահայ թեմերի նկատմամբ: Պատճառն այն

3 Անդ, էջ 278:

էր, որ մինչ այդ, Էջմիածնի կողմից լիազորված Բարսեղ եպիսկոպոսը՝ ծանր եւ դժկամ բնավորությամբ, իր դեմ էր տրամադրել տեղի հայերին: Վերջիններս իրենց բողոքն են հայտնում ցարին, որն ընդունում է նրանց բողոքը եւ արգելում Էջմիածնի եպիսկոպոսների մուտքը Ռուսաստան: Ստեղծված իրավիճակից օգտվելով՝ Գանձասարի կաթողիկոսությունը փորձեց իր դիրքերն ամրապնդել Ռուսաստանի հայկական գաղթօջախներում: Իսկ դրան խթանում էր այն հանգամանքը, որ ռուսահայ թեմերի առաջնորդը հենց Գանձասարի կաթողիկոսության եպիսկոպոս էր:

Գանձասարի աթոռը ամեն ինչ անում էր, որպեսզի թուլացներ Մայր Աթոռի դիրքերը Ռուսաստանում. «...որոնք ուղղակի Մայր Աթոռի ջլատմանն էին ծառայում, նա այնպիսի իրավունքներ էր շնորհել իր նուիրակին, որ նա խրոխտում էր Ս. Էջմիածնի նուիրակների վերայ...»[4] : Փաստորեն նկատելի է դառնում, որ Գանձասարի կաթողիկոսությունը ամբողջությամբ իր իշխանության ներքո վերցրեց ռուսահայ գաղութների հոգեւոր կյանքը, չնայած Էջմիածինը փորձում էր ամեն կերպ վերահաստատել իր կորցրած դիրքը Ռուսաստանի թեմի նկատմամբ: Այս վիճակը ձգվեց մոտ 20 տարի:

Առաջին լուրջ քայլերը ռուսական արքունիքի հետ հարաբերություններ ձեռնարկելու՝ կատարեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Սիմեոն Ա. Երեւանցին: Բարձրանալով կաթողիկոսական գահին՝ նա լավ էր ըմբռնում իր պաշտոնի կարեւորությունը: Սիմեոն Երեւանցին քաջ գիտակցում էր, թե Եկեղեցին ինչ կարեւոր դերակատարում ունի հայ ժողովրդի ազգապահպանման գործում: Դրա համար նա ամեն ինչ անում էր, որպեսզի Էջմիածինը դառնար համայն հայության հոգեւոր եւ անենակարեւորը՝ ազգային-ազատագրական շարժման կենտրոն: Երեւանցին 1766 թ. Մայր Աթոռում եպիսկոպոսների ժողով է գումարում: Ժողովի մասնակիցները Վեհափառի գլխավորությամբ որոշում են նամակ գրել կայսրուհի Եկատերինա II-ին. «Քանզի գրեաց զթուղթ առ Քրիստոսասէր թագաւորն Ռուսաց Կատարինէ եւ յԱստուածապահ որդին իւր Պաւլ Պետրիչն: Օրհնելով զթագաւորութիւն նոցին եւ ծանուցանելով զորպիսութիւն եւ զիշխանութիւն Սրբոյ Աթոռոյս եւ սորին աթոռակալաց եւ զհնազանդութիւն ամենայն ազգիս հայոց, որք ցանեւցիր գոլով ընդ ամենայն երկիր, յամենայն սրտէ պահեն զհնազանդութիւն իւրեանց Աթոռոյս Սրբոյն Գրիգորի եւ սորին աթոռակալաց: Եւ ապա զանգատ զժողովրդոցն Հայոց որք ի նորին իշխանութեան, թէ յառաջագոյն հնազանդք էին Սրբոյ Աթոռոյս կարգիւր եւ այժմ ԺԷ. ամ է, որք ի մէնջ ապստամբեցեալք զոմն ապստամբ սեւագլուխ առանց հրամանաց հայրապետացն մերոց նստուցին իւրեանց առաջնորդ եւ հոչակեցին թէ՝ հրամանաւ թագաւորին է. եւ մեք զսորին իրաւն եւ սուտն ո՛չ գիտեմք եւ մանաւանդ՝ չեմք գիտակ վարուց եւ հաւատոց նորին. զի թէ ժողովուրդքն հնազանդէին սրբոյ Աթոռոյս եւ մեզ, ապա առաջնորդն գիտութեամբ մերով նստէր եւ գիտէաք զինչ հաւատ ունիլն նորին եւ կամ ինքեանք եւ առաջնորդն իւրեանց գրէին մեզ զթուղթ եւ զօրհնութիւնս մեր խնդրէին: Ծանուցանելով եւ զնուիրակին ո՛չ ընդունիլն եւ զբազումս ըստ սոցին բանս: Եւ ապա խնդրելով՝ զի հանցէ զհրաման յամենայն իշխանութիւնս իւր, զի ժողովուրդքն հայոց Սրբոյ Աթոռոյս

4 «Դիւան հայոց պատմութեան», գիրք Գ., Սիմէոն Կաթուղիկոսի Յիշատակարանը, Թիֆլիս, 1894, էջ ՃԻԴ:

հնազանդեսցին հոգեւորապէս եւ ծառայեսցեն, եւ եպիսկոպոսն նոցին ի Սրբոյ Աթոռոյս կարգեսցի որպէս յառաջն էր: Եւ յոյժ թախանձանօք խնդրեաց շնորհել զհրամանագիր այսր աղագաւ»[5]: Սիմեոն Երեւանցին նամակում օրհնում էր թագուհու եւ թագաժառանգ Պավելի թագավորությունը: Կաթողիկոսը նամակում նաեւ կայսրուհուն հայտնում է «Հաշտարիանի»[6] հայերի վատ վերաբերմունքի մասին դեպի Էջմիածինը: Վեհափառ Հայրապետը հայտնում է նաեւ, որ ռուսահայերը առանց Մայր Աթոռի թույլտվության իրենց առաջնորդ են ընտրել եւ պնդում են, որ այդ առաջնորդը ընտրվել է ցարի հրամանով եւ հակառակ Էջմիածնի կամքին, իր կողմից ուղարկված բոլոր նվիրակներին չեն ընդունում: Որպեսզի վերջ տրվի այդ խառնիճաղանջ վիճակին, Սիմեոն Երեւանցին նամակում խնդրում է կայսրուհուն հրաման արձակել, որպեսզի Ռուսաստանի տարածքում բնակվող բոլոր հայերը իրենց հոգեւոր կենտրոն ընդունեն Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, եւ Ռուսաստանի թեմերի առաջնորդը նշանակվի Էջմիածնի Կաթողիկոսի կողմից: Ի նշան Հայ եւ Ռուս եկեղեցիների հոգեւոր բարեկամության՝ Կաթողիկոսը նամակի հետ թանկարժեք նվերներ է ուղարկում Եկատերինա II կայսրուհուն. «...Հայրապետը այդ թղթի հետ ընծա ուղարկեց թագուհուն Ս. Կարապետի, Ս. Հռիփսիմէ կոյսի, Ս. Գէորգ զօրավարի նշխարների եւ Նոյեան տապանի մի մասը...»[7]: Կաթողիկոսը հրամայում է թանկարժեք նվերները դնել արծաթյա տուփի մեջ, իր կաթողիկոսական կնիքով կնքում է եւ Դավիթ վարդապետի հետ ուղարկում Ռուսաստան: Որպեսզի իր ուղարկած պատգամավորությունը հաջողություն ունենա Ռուսաստանում, Սիմեոն Երեւանցին փորձում է կապ հաստատել Ռուսաստանում բնակվող երեւելի հայերի հետ, որոնք ելումուտ ունեին ցարական արքունիք: Կաթողիկոսը նամակ է գրում նաեւ Մովսես անունով մի հայի, որ առաջին շերամագործն էր ռուսական կայսրությունում եւ շատ մտերիմ էր ցարական արքունիքի հետ:

Մովսեսը Աստրապատ գյուղից էր եւ գնալով Ռուսաստան՝ իր հետ տանում է նաեւ թթենու սերմ: Թթենին աճեցնելուց հետո նա սկսում է զբաղվել շերամապահությամբ: Եւ երբ այդ լուրը հասնում է ցարին, վերջինս շատ է ուրախանում, քանի որ մինչ դա շերամագործությունը հայտնի չէր Ռուսաստանում: Որպեսզի Մովսեսը հաջողությամբ շարունակի իր սկսած գործը, ցարի հրամանով նրան մի մեծ գյուղ են նվեր տալիս՝ շերամապահության արհեստը զարգացնելու համար:

Սիմեոն Երեւանցին Մովսեսին ուղարկված իր նամակում խնդրում էր, որպեսզի իր կողմից ուղարկված պատվիրակին ամեն կերպ օգտակար լինի. «Այր ոմն ասպապատեցի Մովսէս անուամբ, յանուշան ազգէ, գնացեալ յերկիրն Ռուսաց կացեալ էր անդ ժամանակս ինչ: Ապա զսերմն թթոյ տարեալ անդ՝ ցանեալ էր եւ ի բուսանիլն արկեալ էր ի նա գորթն ապրիշումի եւ զապրիշումն գոյացեալ, առեալ տարեալ էր ընծայ մեծի արքային Ռուսաց, որ մինչեւ ցայժմ յերկրէ նորին չելանէր ապրիշում: Եւ թագաւորին Ռուսաց տեսեալ զայն, ուրախացեալ էր յոյժ եւ բարձրացուցեալ զնա ի մեծագոյն փառս, արարեալ

5 «Սիմէոն կաթուղիկոսի Ցիշատակարանը», էջ 498:
6 Անդ, էջ ՃԻԶ:
7 Անդ, էջ ՃԻԵ:

էր համապատիւ նախարարացն իւրոց եւ տուեալ էր նմա զգեօղ եւ զռահաթ, հոգալ անդ զկամացն զապրիշումն: Եւ էր նա այժմ սիրեցեալ յոյժ յաչս թագաւորին եւ խօսք նորին առաջի նորա ընդունելի էր յոյժ: Նմա եւս տեղեկացեալ զվիճոցն, որք անդէն գոյին ի Հաշտարխան եւ զպաղութիւն սրտից ժողովրդեան տեղւոյն առ Սուրբ Աթոռս, գրեալ էր առ սրբազան Վեհրն ցաւակօրէն զգիր, եւ զորպիսութիւնս իւր ծանուցեալ եւ խնդրեալ էր գրել առ նա զթուղթ. Վասն որոյ եւ սրբազան Վեհրն գրեաց առ նա զթուղթ մի ի պատասխանի թղթոյն, ուրախանալով ընդ յառաջադիմութիւնն: Եւ ընդ սրտացաւութիւնն առ ազգս տարագրեալ եւ ընդ գոլն հաստատուն ի սուրբ հաւատս մեր եւ ընդ սէրն՝ որ առ Սուրբ Աթոռս: Եւ օրհնութիւն բազում եւ պատուէր նմին, նախապէս մնալ հարազատ առ օրհնեալ Թ-ազաւորութիւնն Ռուսաց, որով զօրացեալ էր: Երկրորդ՝ մնալ անշեղ ի Սուրբ հաւատս մեր: Երրորդ՝ ունիլ զսէրն եւ զհարազատութիւնն առ Սուրբ Աթոռս մշտապէս: Եւ յանձնարարութիւն վասն նուիրակին եւ Դաւիթ վարդապետին խնդրելով ջանալ փութով զԴաւիթ վարդապետն դարձուցանել. զի ամենայն խնդիրքն քոյ, ասէ, յայնժամ կատարեսցին. զի նա եւս էր գրեալ սրտացաւօրէն զանցից տեղւոյն եւ զվիճոցն, որք էին ի մէջ նուիրակին տեղականացն, որոյ աղագաւ խնդրեալ եւս էր զայն առնել՝ զոր ինչքան զայս յառաջ սրբազան Վեհրն արարեալ իսկ էր ի ձեռն Դաւիթ վարդապետին (որպէս ասացեալ եղեւ ի յօգ. Գ.) ծանոյց եւս թէ՝ ասելիք եւ խորհելիք զոն ընդ քեզ նուիրակին, զի գրեաց նուիրակին՝ զի թէ պատշաճ տեսցեն, բացցեն նմա զիտորհուրդն, որ ի ձեռն Դաւիթ վարդապետին, զի եւ նա նպաստ լիցի»[8]:

Հայրապետը նամակներ է գրում Ռուսաստանում ապրող այլ երեւելի հայերի նույնպես: Սիմեոն Երեւանցու ջանքերը Ռուսաստան ուղարկված պատվիրակության առումով հաջողությամբ պսակվեցին: Դավիթ վարդապետը մեծ ընդունելության արժանացավ Ռուսաստանում: Կայսրուհի Եկատերինա II-ը ջերմությամբ է ընդունում Կաթողիկոսի ուղարկած նամակը եւ թանկարժեք նվերները: Ծանոթանալով Վեհափառի նամակի բովանդակությանը՝ կայսրուհին հրամայում է, որ հրովարտակ պատրաստեն: Հրովարտակը գրվում է մագաղաթի վրա ոսկե տառերով: Կայսրուհու հրամանով պատրաստվում է նաեւ մագաղաթի հայերեն թարգմանությամբ տարբերակը: Այդ երկու մագաղաթները կնքվում են կայսերական կնիքով: Հրովարտակը այլ թանկարժեք նվերների հետ, ի նշան կայսերական բարեհաճության, Դավիթ վարդապետի միջոցով ուղարկվում է Ամենայն Հայոց Հայրապետին: Հրովարտակում գրված էր, որ կայսրուհին հրամայում է, որ Ռուսաստանի տարածքում ապրող բոլոր հայերը ենթարկվելու են Ամենայն Հայոց Կաթողիկոսին, եւ Էջմիածնի Կաթողիկոսի հրամանով թեմերի առաջնորդներ կնշանակվեն: Հարկ ենք համարում մեջբերել կայսրուհու հրամանով գրված հրովարտակն ամբողջությամբ. «Ամենապատուելի պատրիարգ Սիմէոնին եւ միւս բոլոր պատուելի իւգբաշիներին, կառավարիչներին եւ բոլոր պատուելի Հայոց ազգին մեր կայսերական ողորմութիւն եւ ողջոյն: Յայտնում ենք մեր այս ողորմութեան հրովարտակով, թէ Ամենայն Հայոց Սիմէոն պատրիարգը, որ բնակվում է Մեծ Հայաստանի Վաղարշապատ քաղաքում, իւր

8 «Սիմէոն կաթուղիկոսի Յիշատակարանը», էջ 685-687:

պատգամաւոր Դաւիթ վարդապետի հետ ուղարկել էր արքայանիստ Մոսկով քաղաքը մի թուղթ, որով ամենախոնարհաբար խնդրում էր մեզանից, որ շնորհենք նորան Մեր Կայսերական Բարձրագոյն Հրովարտակը՝ պահելու Աթոռանիստ եկեղեցում իբրեւ յաւիտենական յիշատակ Մեր ողորմութեան եւ բարեհաճութեան. եւ ինչպէս որ սորանից առաջ Մեր մեծ նախնիքը՝ յաւիտենական փառքի արժանաւոր Մեծ Պետրոս կայսրը եւ կայսրուհի Եկատերինէ Ալէքսէեւնան բարեհաճեցին հայոց հաւատարիմ ազգը քրիստոնէութեան համար՝ իւրեանց կայսերական ողորմութեան ներքոյ պահպանել (որ ցոյց են տալիս եւ 1724 ու 1726 թուականներին, այն ժամանակուան Եսայի եւ Ներսէս) պատրիարգների, իւզբաշիների եւ կառավարիչների եւ բոլոր պատուելի հայոց ազգի անունով նոցա տուած թղթեր). նոյնպէս եւ Մենք հետեւելով Մեր յիշեալ Բարձրագոյն Նախնիքներին՝ բարեհաճում ենք նոյնպէս թէ ներկայ ամենապատուելի Սիմէոն Պատրիարգին եւ թէ նորա պատրիարգական Աթոռի յաջորդներին, նոյնպէս եւ իւզբաշիներին եւ կառավարիչներին եւ բոլոր հաւատարիմ Հայոց ազգը պահպանել մեր կայսերական ողորմութեան եւ շնորհաց ներքոյ: Նոյնպէս բարեհաճում ենք որ Մեր՝ Ռուսաց կայսերութեան երկրում բնակուող Հայ ժողովուրդը պաշտէ իր դաւանութիւնը իր հոգեւորական կանոններով եւ եկեղեցական կարգերով յիշեալ Սիմէոն Պատրիարգի եւ նորա պատրիարգական Աթոռի յաջորդների իրաւասութեան ներքոյ, ինչպէս որ սորանից առաջ էր. եւ երբ նոքա կը պահանջեն ուղարկել նոցա համար հայոց արքեպիսկոպոսներ կամ ուրիշ հոգեւորական պաշտօնեայ՝ Պատրիարգի գրաւոր վկայութեամբ, առանց որի չեն ընդունուի մէր Տէրութեան մէջ, որի համար եւ հրամանագիրներ տրուեցան մեզանից Մեր սահմանի կառավարիչներին: Այլ եւ յուսադրում ենք բոլորովին յիշեալ Սիմէոն Պատրիարգին պատուելի իւզբաշներին եւ կառավարիչներին եւ բոլոր հայկազանց, առաւելապէս Մեր Ռուսաց Կայսերութեան հովանաւորութեան տակ ապրողներին, պահել նոցա Մեր Բարձրագոյն Կայսերական ողորմութեան եւ հովանաւորութեան ներքոյ: Եւ ընդ նմին յայտնում ենք, թէ Սուրբ Կարապետի եւ Տիրոջ Մկրտչի, Սուրբ կոյս Հռիփսիմէի, մեծ նահատակ Սուրբ Գէորգի նշխարները, այլ եւ Նոյեան տապանի մասը, որոնք ուղարկուած էին Մեզ Սիմէոն Պատրիարգից Դաւիթ վարդապետի ձեռքով, ընդունեցինք Մեր առանձին բարեհաճութեամբ. եւ յիշեալ Դաւիթ վարդապետին յետ դարձրինք Հայրապետական Աթոռը Մեր այս Կայսերական հրովարտակով, յուսալով, թէ կարող է նա բերանացի եւս յայտնել բոլոր հաւատարիմ հայ ազգին Մեր՝ դէպի նա Կայսերական ողորմութիւնը եւ շնորհքը, որով մնում ենք եւ մենք: Տուաւ մեր արքայանիստ Սանկտ Պետերբուրգ քաղաքում կնքած Մեր թագաւորական մեծ կնիքով: Յուլիսի 30-ին 1768 թուին»[9]:

Այսպիսով, Եկատերինա II կայսրուհու անմիջական օժանդակությամբ Էջմիածինը կարողացավ վերականգնել իր խաթարված դիրքերը Ռուսաստանում: Սիմեոն Երեւանցին՝ իբրեւ շնորհակալություն, ցարական ընտանիքի համար գրեց մի մաղթանք: Կաթողիկոսը մաղթանքի ձեւը վերցրեց ոչ թե հայկական աղոթքներից եւ հոգեւոր երգերից, այլ ինքը հորինեց. «...Սիմէոն ինքնին «Ամենահզօր Աստուած» սկսուածով երեք տուն շարա-

9 «Մեղու Հայաստանի»,1858, թ. 45 , էջ 356:

կան մը շինած է, եւ «Օրհնեալ ես, Հայր ամենակալ» աղօթք մըն ալ յօրինած, «Եւ արդ մեք» հանգիստով: Անոնց վրայ աւելցուցած է ի Սողոմոնէ 7 տուն, Առակէ, Եսայիէ, Պետրոսէ եւ Պօղոսէ, եւ Մատթէոսի աւետարանէն ընթերցուածներ, եւ անդասպանի ձեւով տեառնագրութեան ու Պահպանեա ու Հայր մեր»[10]: Կայսերական այս մաղթանքը կիրառության մեջ էր ռուսական կայսրության բոլոր եկեղեցիներում մինչեւ 1917 թ. բոլշեւիկյան հեղափոխությունը: Կայսերական ընտանիքին նվիրված մաղթանքը առաջին անգամ տպագրվում է 1771 թ. Սիմեոն Երեւանցու հիմնադրած Էջմիածնի տպարանում:

Սիմեոն Երեւանցու գործադրած ջանքերը Մայր Աթոռի դերը ռուսական կայսրությունում ապրող հայերի վրա տարածելու ուղղությամբ վերջնականապես պսակվեցին հաջողությամբ: Վերջ դրվեց այն խնդրին, որը տասնյոթ տարի մտահոգում էր Էջմիածնի կաթողիկոսներին: Անշուշտ մեծ փառքի է արժանի Սիմեոն Երեւանցին, որ իր խոհեմ եւ հեռատես կրոնական եւ քաղաքական գործունեությամբ կարողացավ բարձրացնել Մայր Աթոռի դերն ու նշանակությունը եւ դրա միջոցով նա ճանապարհ հարթեց հետագայում հայ-ռուսական հարաբերությունների խորացմանը: Սիմեոն Երեւանցին իրագործեց այն գաղափարը, որի համար մինչ այդ մաքառում էր Իսրայել Օրին. այն է՝ բարիդրացիական հարաբերություններ հաստատել օրըստօրե հզորացող ռուսական կայսրության հետ եւ նրա օժանդակությամբ ազատագրել հայրենիքը այլադավանների անտանելի լծից: Եւ նրան հաջողվեց իրագործել այդ վաղեմի գաղափարը: Սիմեոն Երեւանցի Կաթողիկոսը կարողացավ լուրջ հարաբերություններ հաստատել ցարական արքունիքի հետ. «Այնուհետեւ արդէն Ռուսաց արքունիքն ու նախարարները սկսում են մերձ յարաբերութիւններ Ս. Էջմիածնի Կաթուղիկոսի հետ...»[11]:

10 **Մաղաքիա արքեպ. Օրմանեան**, Ազգապատում, հատ. Ա., մասն Ա., Բ. տպագրություն, Պէյրութ, 1959, էջ 912:

11 «Սիմէոն Կաթուղիկոսի Յիշատակարանը», էջ ՃԼԲ: